

Ապագա Հանդես

APAGA
Quarterly

Հայ-իրանական մշակութային եւ հասարակական եռամսյա հանդես
An International Journal of Oriental Studies



Արցախ, Տիգրանակերտ

ISSN 1682-5438

Համար 69, Հունիս , 2017 թ.

No. 69, June 2017

Հայ-իրանական մշակութային եւ հասարակական միջազգային եռամսյա հանդես
An international Quarterly Journal of Oriental studies

Արտոնատեր, Հրատարակիչ եւ Գլխավոր խմբագիր
License-holder, Publisher & Editor-in-Chief

Էդ. Բաղդասարյան / Ed. Baghdasarian, PhD.

Փոստարկղ համար 15875-9488 Թեհրան-Իրան
POBOX No. 15875-9488 Tehran – Iran

WEB: www.ApagaOnline.com and www.apagamonthly.4t.com
E-mail: apaga98@hotmail.com ISSN 1682-5438

Բովանդակություն

- Հայերեն** - Ազատագրական կռիվները Սյունիքում եւ
Ղարաբաղում
- Քաղաքացիական կռիվները Խորհրդային
Հայաստանում 1921 թ. Փետրվարյան
արկածախնդրությունը

Անգլերեն Ահ ու սարսափի իշխանություն- Այնթապի, Մարաշի եւ
Ուրֆայի ջարդերը

Պարսկերեն Իրանահայ համայնքը Շահ Աբասից հետո

CONTENTS

Armenian Liberation wars in Syunik and Artsakh
Civil War in Soviet Armenia and February riot

English A REIGN OF TERROR- Armenian Massacres in Aiantab,
Marash and Urfa

Persian Armenian of Iran After Shah Abbas

-
- Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին:
 - Արտատպության դեպքում հղումը «Ապագա»-ին պարտադիր է:
 - Ստացված հոդվածները չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Subscriptions: \$ 20 per year

Գինը 5000 դրամ

Ազատագրական կոիվները Սյունիքում և Ղարաբաղում

Էդ. Բաղդասարյան

18-րդ դարի 20-ական թվականներին Սյունիքում ծավալվեց հայ ազատագրական շարժում¹: Շարժման ղեկավար Դավիթ Բեկը ծառայել է վրաց թագավոր Վախթանգ Զ-ի բանակում: Վերջինս Իրանի ծայրամասը հանդիսացող Կովկասի վալին էր, որ 1719 թվականից ի վեր՝ կողմնորոշվեց դեպի Ռուսաստան եւ դարձավ այս տարածաշրջանի ժողովուրդների ազատագրական պայքարի հիմնական ղեկավարը: Սյունիքի հայերի խնդրանքով Դավիթ Բեկը իր զորախմբով 1722-ի վերջին եկել էր Կապան եւ ղեկավարել օտար զավթիչների դեմ բռնված ժողովրդական շարժմանը:

Սեֆյան Իրանի դեմ Ղարաբաղի հայերի բարձրացած ապստամբության մասին է խոսում Նադիր շահի պալատական պատմիչ Մուհամեդ Կազիմը: Նա գրում է, որ շահ Թահմասպի՝ Իրանի նոր տիրակալ հռչակվելուց հետո նրա մոտ են եկել Գանձակի եւ Ղարաբաղի կողմերից պատգամավորներ, որոնք ահաբեկված շահին պատմել են հայերի ապստամբության մասին:

1724 թ. օգոստոսի 21-ի (1136 թ. Զիհեջե ամսի) թվակիր շահ Թահմասպ Բ-ի Բարգուշատի Ֆաթհ-Ալի սուլթանին ուղղված մի հրովարտակից իմանում ենք, որ շահը վերոհիշյալ ֆեոդալին լայն արտոնություններ է շնորհել հայերի ապստամբությունը ճնշելու

¹ - Այս շարժման մասին հիմնական սկզբնաղբյուրը Նույն դարի կեսերին Մխիթարյան վանական Ղուկաս Սեբաստացու , Ընտիր պատմություն Դավիթ Բեկինե աշխատությունն է, որին աղբյուր է ծառայել 1722-1728 թթ. Սյունիքի ապստամբությանը մասնակից մեղորեցի Ստեփանոս Շահումյանի եւ շարժման մի քանի մասնակիցների պատմած հուշերը: Ղ. Ալիշան՝ Սիասական, էջ 301: Նադիր շահի պալատական պատմիչ Մուհամեդ Կազիմի աշխատությունը (Յ.Դ. Փափազյան, Դավիթ Բեկ, ՊԲՀ, 1987թ, No.1, էջ 92):

գործում եւ Սեֆյան մյուս իշխանավորներին կոչ է արել համատեղ հանդես գալ հայերի դեմ²:

Սակայն արդեն Դավիթ Բեկը կազմակերպել էր հայկական զորախմբեր, վերականգնել բերդերն ու ամրոցները, ստեղծել էր ռազմական կայուն հենակետեր, սանձել էր Սյունիք թափառած թուրք-թաթար վաշկատուն հրոսակախմբերի խժոժությունները: Հակահարված հասցնելով մահմեդականացած հայ մելիքներ Բաղրին (Տաթևում), Ֆրանգյուլին (Արծվանիկում) եւ թուրք-թաթարական մի շարք ցեղապետերի՝ ազատագրել էր նրանց տիրույթները եւ պարգևել իր զորահրամանատարներին: 1724-ի սկզբին Արցախից (Ղարաբաղ) օգնության եկած Ավան Յուզբաշու զորամասի (2000 մարտիկ) հետ հաղթական մարտեր մղելով Օրդուբադի, Նախիջևանի, Բարգուշատի, Ղարադաղի (Փայտակարան) խաների դեմ, ազատագրելով Շինուհայրը, Հալիձորը, Զելվան, Որոտանը, Դավիթ Բեկը Սյունիքում ստեղծեց հայկական անկախ իշխանություն՝ Հալիձոր կենտրոնով: 1724-25-ին Դավիթ Բեկի եւ նրա զորահրամանատարներ Թորոսը, Մխիթար Սպարապետը, Ստեփան Շահումյանը, Տեր-Ավետիսը հաջող մարտեր են մղել շրջակա թշնամիների դեմ, մաքրել Սյունիքը թուրք-թաթարական եւ քրդական հրոսակ ցեղերից³:

1725-27-ին երբ Թուրքիան զինակալել էր Կովկասը, նա փակվել է Հալիձորի բերդում եւ հերոսաբար կռվել այն պաշարած թուրքական զերակշիռ զորքերի դեմ: Անսպասելի հակազդույթով ջախջախելով թուրքական զորքերին՝ նրանց մնացածներին ոչնչացրել է Մեղրու, Բարգուշատի եւ Բեխավանի մատույցներում: Վերականգնելով անկախությունը՝ Դավիթ Բեկը 1717-ին կապ է հաստատել Պարսից շահ Թահմազի հետ, որը ճանաչել է նրա իշխանապետությունը Սյունիքում, տվել դրամ հատելու իրավունք:

² - Զ.Դ. Փափազյան, Դավիթ Բեկի պայքարը օսմանյան ներխուժման դեմ եւ հարաբերությունները իրանական հակաօսմանյան դիմադրության ուժերի հետ, ՊԲՀ, 1987, No. 1, էջ 93:

³ - Հայ Ժողովրդի Պատմություն, հ, 4, էջ 165:

Եթե 1724 թ. Շահը, ինչպես երևում է հիշված հրովարտակից, իր ենթականերին կոչ էր անում ճնշել հայերի ապստամբությունը, ապա մի երկու տարի անց 1726թ. այդ նույն Շահն իրեն հավատարիմ մնացած խաներին հրամայում էր օգնել Դավիթ Բեկի գլխավորած հայերի ռազմաշոկատներին՝ ընդդեմ օսմանցիների ու նրանց կողմն անցած առանձին թաթարական (ներկայիս ադրբեջանցիներ) ֆեոդալների⁴:

Սակայն ներքին եւ արտաքին քաղաքական անբարենպաստ պայմաններում Դավիթ Բեկի փոքրաթիվ ուժերը չկարողացան երկար դիմադրել Թուրքիայի եւ նրա հետ սերտորեն համագործակցող թուրք-թաթարական թշնամիների գերակշռող ուժերին: 1728-ի գարնանը թուրքական զորքերը վերստին ռազմավարեցին Սյունիքը եւ Արցախը: Այդ ժամանակ էլ անսպասելի վախճանվեց Դավիթ Բեկը (հավանաբար թունավորումից), որին փոխարինեց Մխիթար Սպարապետը:

Անողորմ էր Դավիթ Բեկը մելիքական դասի այն ներկայացուցիչների նկատմամբ, որոնք գերադասելով իրենց անձնական շահերը, մեկուսի դիրք էին գրավում կամ գործակցում էին հակառակորդի հետ: Անպատիժ չէր թողնում նաեւ իր հավատարիմ զորականներին, եթե նրանք սխալներ կամ հանցանքներ էին թույլ տալիս: Այսպես օրինակ, նա հարկադրված եղավ կարճատեւ կալանքի տակ առնել Մելիք-Փարսադանին եւ Տեր-Ավետիսին, բախվեց Չավնդուրի հրամանատար Թորոսի, Կալերի հրամանատար Պապի եւ անգամ իր մերձավոր զինակից Մխիթար Բեկի հետ⁵:

Շարժման գլխավոր թշնամիները տեղական ֆեոդալներն ու խաներն էին, ապա հետագայում առաջացող թուրքական զորքերն ու նրանց միացած թաթար, քուրդ ու մյուս քոչվոր ցեղերը:

Դավիթ Բեկի ջանքերով հավաքագրված բոլոր հայ ռազմիկների թիվը հասնում էր 6-7 հազարի: Սակայն խոշոր

⁴ - Մ.Կ. Չոկալյան, ԱԶԳ. աշխ. էջ 201:

⁵ - Հայ Ժողովրդի Պատմություն, հ, 4, էջ 165:

ճակատամարտերի ժամանակ բնակչության հոծ զանգվածներ էին ընդկրկվում ռազմական գործողությունների մեջ:

Մխիթար բեկը 1726 թ. մարտի 24-ին մի աղերսագիր է ուղարկում ցարին, նրանից անհապաղ օգնության խնդրանքով, որով եւ ոմանք ենթադրում են, որ Դավիթ բեկը պետք է վախճանված լիներ 1726 թվականից առաջ, որից անմիջապես հետո, Ղափանի զինվորության ղեկավարությունն անցել է Մխիթարին⁶:

Մինչ Ղափանում խիստ մարտեր էին գնում թուրքերի եւ հայերի միջեւ, Ատրպատականում ներխուժած օսմանյան նվաճողների դեմ ծավալված ազատագրական ազատագրական պայքարը գլխավորում էր Սեֆյան շահ Թահմազ Բ-ը: 1727 թ. է վերաբերում Ղափանի ապստամբության ղեկավարների նոր ձեռնարկը, կապ հաստատելու Ատրպատականում գտնվող շահ Թահմազի հետ: Վերջինս ընդունելով հայերի պատվիրակությանը, հատուկ հրովարտակով ճանաչում է Դավիթ Բեկի իշխանությունը Ղափանի երկրում եւ հանձնարարում է շարունակել պայքարը օսմանցիների դեմ: Շահը ինչպես արդեն հիշատակեցինք, Դավիթ Բեկին արտոնել էր նաեւ դրամ հատել ու նրան ու նրա զորավարներին պարգևատրել է թանկարժեք նվերներով⁷:

Սակայն Թահմազի հանձնարարությամբ հայերի հետ դաշնակցած խաները Ագուլիսի մոտ մղված վճռական ճակատամարտում փախուստի դիմեցին, կռվի ամբողջ ծանրությունը թողնելով հայ մարտիկների վրա:

Թովմա առաքյալի վանքում ամրացած Դավիթ Բեկի եւ նրանց զինակիցների համար շուտով ստեղծվում է վտանգավոր վիճակ: Ագուլիսի քաղանթար Մելիք Մուսին իր համախոհներով բացահայտ անցնում է թուրքերի կողմը: Դավիթ Բեկի մահից հետո, Մխիթար Բեկը շարունակում է ազատագրական շարժումը⁸: Երբ Տեր-

⁶ - Նույն տեղում, էջ 170:

⁷ - Մ. Չամչյան, նշվ. աշխ. հ 3, էջ 797:

⁸ - Նույն տեղում, էջ 799:

Ավետիսի դավաճանությունն հետեւանքով թուրքերը խաբեություն մը կարողացան մուտք գործել Հալիձորի բերդը եւ դրժելով տված խոստումը կոտորեցին ու գերեցին բերդի բնակիչներին, Մխիթար Բեկին հաջողվեց գիշերով դուրս գալ բերդից եւ նոր զորքեր հավաքելով հաղթական մարտեր մղել թշնամու կանոնավոր զորքերի եւ նրանց միացած տեղական ֆեոդալների դեմ:

Այսուհանդերձ դրուժյունը շարունակում էր մնալ օրհասական: Հալիձորը գրավված էր ու ավերված: Թշնամու շարքերին էին միանում նորանոր ուժեր, տարածայնությունները խորանում էին Մխիթար Բեկի եւ նրա զինակիցների միջեւ: Այս դժվարին պայմաններում, յուրաքանչյուր շրջան մտահոգվում էր միայն իր անվտանգության հարցերով: Խնձորեսկի բերդում իր իսկ հայրենակիցների դավադրության զոհ է դառնում Ղափանի ազատագրական կռիվների անվանի զորավար ու հերոս Մխիթար Սպարապետը:

Քաղաքացիական կռիվները հորհրդային Հայաստանում 1921 թ.

Փետրվարյան արկածախնդրությունը

ԱՄՆ-ի, Անգլիայի եւ Ֆրանսիայի իմպերիալիստները բազմապիսի օգնություն ցույց տալով Անդրկովկասի հակահեղափոխական ուժերին, նպատակ էին դրել ձեռքից բաց չթողնել Անդրկովկասը: Ֆրանսիական «գերագույն կոմիսար» Ա. Շեալյեն 1920 թ. դեկտեմբերի 16-ին Թիֆլիսում մենշևիկյան Վրաստանի Հեռագրատան գործակալության աշխատակցի հետ ունեցած զրույցում հայտարարել է, որ ամբողջ Վրաստանում աշխարհի շահերը պահանջում են Հայաստանի եւ Ադրբեջանի Սովետական իշխանությունների տապալումը: Դրանից մի քանի շաբաթ հետո, 1921 թ. հունվարի 27-ին, անգլիական «Թալմա»-ը գրել է. «Դաշնակների լիդերներն այս ամսի սկզբին Թիֆլիսում ունեցած կոնֆերանսում վճռել են բոլոր հնարավոր միջոցներով շարունակել կռիվը բոլշևիզմի դեմ...»⁹: Սակայն թերթը միաժամանակ նշել է, որ դրա համար անհրաժեշտ է դրսի օգնությունը դաշնակցականներին:

Նշված իմպերիալիստական պետությունների թելադրանքով եւ օգնությամբ այդ ժամանակ մենշևիկյան Վրաստանում Վրացիական կազմակերպվում են Հայաստանի, Ադրբեջանի, Կովկասի Լեռնային Հանրապետության «փրկության կոմիտեներ»:

Այդ ժամանակ Հայաստանի ծայրամասերում սովետական իշխանությունը չէր հասցրել բավարար քաղաքական աշխատանք կատարել: Մյուս կողմից դրությունը անբարենհաջող էր նաեւ այն պատճառով, որ ռազմական կոմունիզմի քաղաքական- նության

⁹ - Յ. Էլիբեկյան, Ա. Հակոբյան, Նշվ. աշխ. էջ 89-90:

կիրառման ընթացքում Հայաստանում տեղի ունեցան մի շարք շեղումներ եւ սխալներ¹⁰։

Հայաստանի Ռեւիոմը, որի կազմի մեջ խցկվել էին պատեհապաշտ տարրեր, դաշնակցականների եւ մյուս հակահեղափոխական կուսակցությունների նկատմամբ ձեռք չառավ վճռական միջոցներ։ Իսկ դաշնակցականների մի մասը, որոնք տակտիկական նկատառումներով քողարկված էին «ձախ» պիտակի տակ, ազատ կերպով ման էին գալիս Սովետական Հայաստանի մայրաքաղաքում եւ մյուս շրջաններում։ Նրանցից ոմանք տեղավորված էին սովետական ապարատում, բանակում, նույնիսկ ղեկավար դիրքերում, եւ գաղտագողի դավեր էին նյութում բանվորների ու գյուղացիների պետության դեմ։ 1920 թ. դեկտեմբերի կեսերին Երեւանում կազմակերպվում է դաշնակցության անլեգալ կոմիտե։ Արկածախնդրության ամբողջ նախապատրաստումը վերցնելով իր ձեռքը, այդ կոմիտեն սերտ կապ է հաստատում Հայաստանի այն շրջանների հետ, որտեղ կենտրոնացած էին իրենց թաքնված ուժերը՝ Բաշ-Գյանուի, Աշտարակ, Էջմիածին, Դարալագյազ։

Հարկ է նշել, որ օգտվելով Սովետական Հայաստանի նորաստեղծ կարմիր բանակում ունեցած ղեկավար դիրքից, Դրոն գաղտագողի իր շուրջն էր համախմբում սովետական իշխանության թշնամիներին։ Հայաստանի կարմիր բանակի շտաբում եւ մի շարք ղեկավար պաշտոններում նա տեղավորել էր դաշնակցական սպաների, որոնք արժեքավոր հետախուզական տվյալներ վերցնելով կարմիր բանակի ուժերի դասավորության մասին, փետրվարյան արկածախնդրության նախօրյակին փախել էին Բաշ-Գյանուի։ Դրանց թվում էր Ս. Թարխանյանը ՄԿուռոն՝ որը արկածախնդրության ժամանակ գլխավորեց դաշնակցականների զինված ուժերի ռազմական գործողությունները¹¹։

Հայաստանում իրենց հենակետն էին դարձրել Զանգեզուրը՝ ուր հավաքվել էին Նժդեհ, Ռուբենը եւ անգործ մնացած

¹⁰ - Նույն տեղում։

¹¹ - ՅԺՊ, հ. 7, էջ 138։

մատուցերիստներ: Մյուս կողմից կապեր էին հաստատվել Թավրիզի միջոցով անգլիացիների եւ Թիֆլիսի հետ, որոնք հսկայական օգնություն են խոստանում նոր ձեռնարկությանը¹²:

Հայաստանում քաղաքացիական կռիվներն սկսվեցին տարերայնորեն եւ ընդգրկեցին մի շարք շրջաններ, ինչպես Կոտայքը, Բաշ-Գյառնին ՎԳառնի՞, Դարալագյազը, Բաշ-Ապարանը եւ Հայաստանի կենտրոնի այլ տարածքներ: Այդ զինված խռովության գլուխ էին կանգնել նախկին խմբապետեր Մարտիրոսը, Կարո Սասունին, Խնկոն եւ ուրիշներ: Փետրվարի 16-18-ը ապստամբները մի շարք շրջաններում իշխանությունը վերցրին իրենց ձեռքը եւ մտան Երեւան: Նրանց օգնեց այն հանգամանքը, որ 11-րդ բանակի զորամասերը դուրս էին բերվել Հայաստանից՝ Վրաստանի խորհրդայնացմանը մասնակցելու համար: Երեւանում ստեղծվեց «Հայրենիքի փրկության» կոմիտե՝ Սիմոն Վրացյանի նախագահությամբ: Վերջինս հրապարակեց հրաման այն մասին, որ «բոլշևիկյան իշխանությունը Հայաստանում վերացված է: Մինչեւ կառավարության կազմվելը ամբողջ իշխանությունը գտնվում է Հայրենիքի փրկության կոմիտեի ձեռքում»:

Խորհրդային Հայաստանի պետական եւ բոլշևիկյան կուսակցության ղեկավար մարմինները Հայաստանի բանակի իրենց հավատարիմ ուժերով եւ 2 զրահագնացքով հեռացան Երեւանից: Նրանք կենտրոնացան Ղամարլու (Արտաշատ) - Վեդի-Բասար (Արարատ) շրջանում, ընկնելով ապստամբների շրջապատման մեջ: Խորհրդային իշխանությունը պահպանվեց հիմնականում Համամլու (Սպիտակ) - Ղարաքիլիսա (Վանաձոր) - Դիլիջան - Շամշադին (Տավուշ) գոտում:

Ռազմական գործողություններն սկզբում ընթանում էին փոփոխակի հաջողության, իսկ ռուսական զորամասերի վերադարձից հետո ուժերի հարաբերակցությունը դասավորվեց ի վնաս ապստամբների: Ռուսական 11-րդ բանակի ուժերով կազմավորվեց Երեւանի ուղղության զորքերի խումբ, որը խնդիր

¹² - Նույն տեղում էջ 94:

ստացավ ճնշել ապստամբությունը եւ գրավել Երեւանը: Երեւանի վրա հարձակումը կատարվում էր Սեւանի եւ Համամլուի (Սպիտակ) ուղղություններից:

Ձոհերից խուսափելու համար 11-րդ բանակի ռազմական խորհրդի անդամ Գ. Օրջոնիկիձեն մարտի 20-ին վերջնագիր ներկայացրեց «Հայրենիքի փրկության» կոմիտեին: Նույն օրը Թիֆլիսից Երեւան ժամանեց ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը: Նա հանդես էր եկել հողավածներով եւ ներագգային պայքարն ու մարդկային զոհեր տալը համարում էր բախտախնդիրների գործ: Ազգային մեծ գործիչը ցավ էր ապրում ժողովրդի արյունը թափելու համար: Նրա համար գլխավորը համագգային շահերն էին, հաշտությունը, ուստի Կարմիր բանակին եւս կոչ էր անում դադարեցնել անիմաստ պատերազմը: Խորհրդային զորքերը ապրիլի 2-ին մտան Երեւան, որտեղ վերահաստատվեց խորհրդային իշխանությունը:

Ապստամբները, հաշվի առնելով ուժերի խիստ անհավասարությունը եւ խուսափելով իրենց նոր զոհերից, այլեւս դիմադրություն ցույց չտվեցին: Նրանք Բաշ-Գյառնիի վրայով նահանջեցին Զանգեզուր, որտեղ շարունակվում էին Գարեգին Նժդեհի ղեկավարած ինքնապաշտպանական մարտերը: Հայաստանում խորհրդային իշխանության հաղթանակն անխուսափելի էր, քանի որ այդ իշխանության թիկունքում կանգնած էր Խորհրդային Ռուսաստանը:

Ապստամբներ միայն կարողացան իրենց ընկերներին բանտարկությունից ազատել: Այնուհետեւ իշխանության գրավումը, ուժերի գոյությունն ունեցող հարաբերակցության պայմաններում, հեռանկար չունեւ: Հետեւաբար դաշնակ-ցության կողմից քաղաքացիական պատերազմի բորբոքումը իզուր արյուն թափել ու զոհեր տալ էր նշանակում եւ չէր բխում ազգային շահերից:

Փետրվարյան արկածախնդրության նախապատրաստման գործում դաշնակցա-կաններին խոշոր չափով օգնել է քեմալական Թուրքիան: Այդ մասին Հայաստանում գործող Կարմիր բանակի զորամասերի շտաբի 1921 թ. փետրվարի ափոփազրում ասված է.

«Փետրվարի 16-ին թուրքական հանձնաժողովի ներկայացուցիչը փորձում էր մեկնել Շահթախտ, ընդ որում մոտիկ կանգնած գործակալների տվյալների համաձայն մեկնելու նպատակն է եղել՝ ապստամբություն բարձրացնել Շահթաթունի եւ Նախիջևանի շրջանում: Նույն տվյալների համաձայն՝ ապստամբությունը նախապատրաստվում էր վաղուց եւ հետեւանք էր դաշնակցականների ու թուրքերի միջեւ տեղի ունեցած հարաբերությունների: Ըստ բոլոր տվյալների, այդ ապստամբությունը կազմակերպված է եւ տարվում է թուրքերի ղեկավարությունը»¹³: Հայաստանի պետական արխիվում կա մի այլ փաստ Փետրվարյան արկածախնդրության նախապատրաստման գործում Թուրքիայի բացահայտ մասնակցության մասին, եւ դա վերաբերում է Հայաստանի Արտաքին գործերի ժողկոմիսարի նոտային որը ուղարկվել է թուրքական բանակի արեւելյան ճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրին, որում բողոք է ներկայացվում կապիտան Բահաեդդինի Մթուրքիայի արեւելյան ճակատի գործերի հրամանատարության ներկայացուցիչը Երեւանում - «Հայաստանի փրկության կոմիտեի» մոտ՝ վարքագիծը Հայաստանի քաղաքացիական կռիւների կապակցությամբ¹⁴:

Կա նաեւ, մի այլ փաստ թուրք-դաշնակցական կապերի մասին, այդ խռովության նախապատրաստման գործում: Կարմիր բանակի հրամանատարական կազմի ներկայացուցիչներից մեկը իր զեկուցում հիշատակում է, որ մի հանդիպման ընթացքում Սովետական Հայաստանի մասին թուրքերը արտահայտվել են. «... բայց այդ բոլորովին չի քանդում մեր պլանները: Ներկայումս մեր կողմից Հայաստանում նոր հեղաշրջում է պատրաստվում... այն

¹³ - ՍՄԿԿ Կենտկոմին կից ՍԷԼՍ ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, 11-րդ բաժնակին վերաբերող նյութեր, կապուկ 4, գ. 1, թ. 103:

(Հ. Էլիքեկյան, Ա. Հակոբյան, նշվ. աշխ. էջ 96):

¹⁴ - ՀՀ Պետական Կենտրոնական Արխիվ, ֆ. 4/114, գ. 102, թ. 22:

հաշվում որ Հայաստանը լինի Թուրքիայի հովանավորության տակ...»¹⁵ :

Այդ հեղաշրջման փորձը փետրվարյան արկածախնդրությունն էր, որը, սակայն չկարողացավ արդարացնել Թուրքական ոճրագործների հույսերը, չնայած նրանց կողմից դաշնակցականներին ցույց տրված ամեն տեսակի օգնությունը:

Ինչ խոսք, որ Թուրքիայի նման քաղաքականությունը խրախուսվում էր Անտանտի, առանձնապես Անգլիայի ու ԱՄՆ-ի իմպերիալիստների կողմից, որոնք սիրաշահելով Թուրքիային, նրան պատերազմի էին հրահրում Սովետական Ռուսաստանի դեմ¹⁶, այդ պատճառով էլ Սեւրի դաշնագիրը չգործադրեցին ի շահ Թուրքիայի եւ նրա հետաքա սպասելիք հանձնարարությունների համար:

Միթե՞ կասկած կա արեւմտյան իմպերիալիստական պետությունների ՖԱՆգլիայի եւ Ամերիկայի գլխավորությամբ՝ հակամարդկային եւ կործանարար քաղաքականության ու պատմական եւ ժամանակակից գործունեության մասին: Հարյուրավոր հատորներ դեռ կարելի է գրել նրանց մասին: Մարդ արարածը կամ հոգով ու սրտով կույր պիտի լինի, որ ականաթող անի այդ փաստերը, կամ էլ գործակալության զուտ մոլուցք ունենա:

Երբ դաշնակցականներին չի հաջողվում իրենց խռովարարությունը ավարտի հասցնել, մասոնական Սիմոն Վրացյանը դիմում է Թուրքիայի մասոնականների պետության օգնությանը: Նա տեսակցություն է ունենում վերոհիշյալ կապիտան Բահանդդինի հետ: 1921 թ. մարտի 1-ին վերջինիս միջոցով Թուրքիայի ազգային ժողովի կառավարությանը Ս. Վրացյանը մի դիմում է ուղարկում, որի մեջ ասվում է.

¹⁵ - ՀՀ Պետական Կետրոնական Արխիվ, քաղվածների Ֆանդ, 2-րդ մաս, գ. 352, թ. 285:

¹⁶ - Դիվանագիտական պատմություն, (ռուսերեն), հատոր 3, Մոսկվա, 1945, էջ 9-100:

«Հայրենիքի փրկության կոմիտեն»... խնդրում է Թյուրքիայի ազգային մեծ ժողովի կառավարությանը, հանուն ազգերի փոխադարձ շահերի ըստ կարելույն շուտ՝

- 1-Երեւան վերադարձնել ռազմաճակատում գտնվող հայ զինվորական ռազմագերիներին:
- 2-Տալ՝ որոշ պայմաններով՝ հայ բանակին ռազմամթերք, առաջին հերթին ռուսական երեք գծանի հրացան կամ տաճկական մատուցերի փամփուշտներ, եւ կամ Ռոսի եւ Լեբելի սիստեմի հրացաններ:
- 3-Հաղորդել մեզ, թե արդյոք ազգային մեծ ժողովի կառավարությունը հնարավոր է գտնում հասցնել Հայաստանին զինվորական օժանդակություն եւ եթե կարող է, ի՞նչ չափով ու եղանակով եւ ի՞նչ ժամանակամիջոցում:

Սույն դիմումն անելով՝ Հայաստանի կառավարությունը հիմնվում է այն բարեկամական հարաբերությունների վրա, որոնց հիմք է դրված Ալեքսանդրապոլի դաշնագրից եւ որոնք խանգարվել էին բոլշեւիկների իշխանության ժամանակ»¹⁷:

Կրկնակի ազգային դավաճանություն 3 ամիսների ընթացքում՝ 1920 թ. դեկտեմբերի 2 եւ 1921 թ. մարտի 1:

Դաշնակցական-Թյուրքիայի համագործակցության կապերի ամենապարզ եւ խոստուն փաստերից է Պրոմեթեի դաշինքը որը 1921 թվականին սահմանավորվեց Թավրիզում նույն Ս. Վրացյանի եւ քեմալականների միջեւ եւ 1926 թվականի դեկտեմբերի 29-ին ստորագրվեց Կ. Պոլսում¹⁸:

¹⁷ - ՀՀ Պետական Կենտրոնական Արխիվ, Ֆ. 37, ց. 1, գ. 9, թ. 66:

¹⁸ - Թորգոմ Վեհապետյան, Արեւմտահայաստանի կորուստը եւ Սփյուռքի հայոց ապագան, Բեյրութ, 1990, էջ 26:

Մյուս կողմից դաշնակցականները դիմում են անգլո-ֆրանսիական եւ ամերիկյան իմպերիալիստների ու իրանի խաների օգնությանը: Սակայն, ոչ մի օգնություն: Դա արդեն շատ ուշ էր:

Խռովության ճնշումից հետո Հայաստանի Ռազմահեղկոմը վերականգնվեց ժողովրդական կոմիսարների խորհրդի (ԺԿԽ), որի նախագահ նշանակվեց Ալեքսանդր Մյասնիկյանը (1886-1925): Նա Հայաստան եկավ ՌԿ(Բ)Կ Կենտկոմի որոշումով: Մինչ այդ նա արդեն ճանաչված գործիչ էր եւ Բելառուսում ու Ռուսաստանում ձեռք էր բերել ղեկավար աշխատանքի մեծ փորձ: Չնայած իր կարճատեւ (շուրջ մեկ տարի) գործունեությանը, նա մեծ դեր խաղաց Հայաստանում քաղաքական լարվածության մեղմացման, հայ մտավորականությանը Հայաստանում համախմբելու, երկիրը խաղաղ շինարարության ուղի փոխադրելու գործում: Այնուհետ եւ Ալ. Մյասնիկյանը ղեկավար աշխատանքի տեղափոխվեց Թիֆլիս (Անդրկովկասյան Դաշնություն): 1925 թ. նա զոհվեց ինքնաթիռի վթարից¹⁹:

Ձանգերգուրի բոլոր շրջանները գրավելուց հետո, կարմիր բանակի զորամասերը 1921թ. հուլիսի 13-ին բոլոր կողմերից գրոհեցին Գենվազի (Մեղրի, Արեւելք) կենտրոն՝ Մեղրի գյուղի վրա եւ գրավեցին այն: Այսպիսով ամբողջովին խորհրդայնացավ Ձանգերգուրը, որից հետո ավարտվեցին քաղաքացիական կռիվները Հայաստանում:

Սակայն 1921 թ, դաշնակցականների կազմակերպված փետրվարյան խռովությունը, որը քաղաքացիական կռիվ մեջ

Թորգոմ Վեհապետյան , Պրոմեթեի ուխտը եւ Հովհաննես Բաջազնունւս պատգամը ՀՀԴ շարքերին եւ սփյուռքի բովանդակ հայության, Բեյրութ 1986:

¹⁹ - Հեղինակների կոլեգիա, Հայոց Պատմություն, Երեւան 1994, էջ 281-282:

քաշեց առանց այն էլ քայքայված երկիրը, զգալի վնաս հասցրեց նաեւ արեւմտահայ գաղթականության հարցի շութափուլթ լուծմանը:

Փետրվարյան այդ խռովությունը նորանոր աղետներ պատճառեց բազմաշարժար հայ ժողովրդին: Բացի այդ, նրա լիկվիդացման օրերին, զոհ գնալով դաշնակցականների տարածած լուրերին ու սպառնալիքներին, ավելի քան մեկ տասնյակ հազար աշխատավորներ, թողած տուն ու տեղ, անցան Պարսկաստան: Խորհրդային Հայաստանի կառավարությունն ստիպված էր մի կողմ թողնել իր շինարար աշխատանքները եւ ձեռնամուխ լինել դաշնակցական «Հայրենիքի փրկության կոմիտեի» դիկտատուրայի լիկվիդացմանը, իսկ դրանից հետո՝ Երեւանից եւ այլ վայրերից Պարսկաստան անցան փախստա-կանների վերադարձի կազմակերպմանը:

Սարսափահար փախստականները սկզբում մտադիրը էին մնալ Զանգեզուրում, բայց այնտեղ ընկնելով անողոր սովի եւ թշվառությունների հորձանուտը խուճապահար շարժվում էին դեպի Պարսկաստան: Յոթ-ութ հազար հոգի Ղարադաղի վրայով մեկնում են Թավրիզ, մի մասն էլ՝ կիսամերկ ու անոթի, մնում է սահմանի մոտ, Արաքսի ափին: Զանազան ավազակախմբեր կողոպտում են նրանց մինչեւ վերջին շապիկը, շատերը խեղդվում են գետն անցնելիս կամ սովամահ լինում: Թավրիզ մեկնածները, կարճ ժամանակում վերջնականապես համոզվում են, որ փրկության ոչ մի ելք չունեն, եթե ոչ տուն վերադարձը, ուստի շուտով ետ են գալիս Զուլֆա եւ այնտեղից խնդրում Խորհրդային Հայաստանի կառավարությանը՝ հնարավորություն տալ իրենց վերադառնալու հայրենի օջախները եւ զբաղվելու խաղաղ աշխատամքներով²⁰:

1921 թ. ապրիլի 25-ից սկսած Արաքս գետի տարբեր հատվածներով, գլխավորապես Մեղրի գյուղի վրայով

²⁰ - Զ. Ու. Մելիքսեթյան. ,Արեւմտահայերի բռնագաղթը եւ սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստանէ, Երեւան 1975, էջ 82-83:

Պարսկաստան է անցել ավելի քան 8,000 փախստական: Այդ փախստականների մեծամասնությունը կենտրոնացել էր Թավրիզում եւ նրա շրջակայքում: Նույն թվականի մայիսի վերջերից Հայաստանի խորհրդային կառավարության ջանքերով սկսվեց փախստականների հայրենադարձությունը եւ մայիս-հուլիս ամիսներին հայրենիք էր վերադարձել շուրջ 4,000 հոգի:

Թավրիզում ապաստան էին գտել Հայաստանի առաջին Հանրապետության բազմաթիվ պետական, կուսակցական, ռազմական, հասարակական գործիչներ՝ ՀՀ Բյուրո-կառավարության անդամները, «Հայրենիքի փրկության կոմիտեն» իր ղեկավարներով եւ բոլոր անդամներով, Լեոնահայաստանի կառավարության անդամներ, մի քանի տասնյակ վաշտապետներ, Հայաստանի խորհրդարանի անդամներ: Այստեղ էին Հովհ. Քաջազնունին, Սիմոն Վրացյանը, Համո Օհանջանյանը, Ռուբեն Տեր-Մինասյանը, Կարո Սասունին, Համբարձում Տերտերյանը, Հակոբ Տեր-Հակոբյանը, Ավետիս Սահակյանը (Հայր Աբրահամ), Վահան Մինախորյանը, Արշամ Խոնդկարյանը, Արշալույս Աստվածատրյանը եւ ուրիշներ:

Մեծ թիվ էին կազմում հայ մտավորականները, ուսուցիչները, խմբագիրները, բժիշկները, փաստաբանները եւ գավառային գործիչները: Թավրիզում էին ակարեմիկոս Ալեքսանդր Թամանյանը, Նիկոլ Աղբալյանը, Մալխասը եւ այլոք: Նժդեհի ուղիղ գնացել էր հայկական Մուժումբար գյուղ: Նա Ղարաբաղի խան Ամիր Արշադին նվիրեց նախապես պարսկական ափր անցկացրած 4 թնդանոթ եւ գնդացիներ:

Հայրենիք վերադառնալու գաղափարը օրեցօր ընդգրկում էր փախստականության նորանոր զանգվածներ: Թավրիզում եւ նրա շրջակա բնակավայրերում կուտակված տարագիրներին վիճակված էր կրելու տնտեսական անասելի դժվարություններ: Նրանց ապաստան տալու եւ նյութապես ու բարոյապես աջակցելու համար անգնահատելի դեր է ստանձնում Ներսես արք. Մելիք-Թանգյանը: Դեռ Կարմիր բանակը նոր էր գրավել Ղափանի հանքերը, երբ Հայաստանի խորհրդային Սոցիալիստական Հանրապետության (ՀԽՍՀ) կառավարությունը Գրիգոր

Վարդանյանին հրահանգեց անմիջապէս մեկնել Թավրիզ եւ իբրեւ Գաղթականութեան կոմիտէի լիազօր՝ շարունակել փախստական աշխատավորութեան հայրենիք վերադարձնելու գործը: Հուլիսի 21-ին Վարդանյանը իր տեղակալ Հայկ Ղազարյանի հետ հասնում է Թավրիզ, ուր խոնված էին 4,000-ից ավելի փախստականներ: Գրիգոր Վարդանյանը Թավրիզ գալուց մի քանի օր հետո՝ հուլիսի 27-ին ՀՍԽՀ արտգործկոմ (Արտաքին գործերի կոմիսար՝ նախարար) Ասքանազ Մուսվանին գրում էր, որ «Հայաստան վերադառնալու համար ցուցակագրվել է 4,200 հոգի, բոլորն էլ աշխատավոր գյուղացիներ:.... համաձայնվեցի ոմանց անցագրեր տալ եւ Մեղրիի գծով ետ ճամփել: Մնացած 900 նորեկների մասին, որ Երեւանի շրջաններից են, կսպասեմ Ձեր կարգադրութեան»: Վարդանյանը Ա. Մուսվանին իր օգոստոսի 9-ի գրած նամակում տեղեկացնում է, որ այդ օրը ճամփա է դրել եւս 2,000 զանգեզուրցի դեպի Մեղրի իրենց եկած ճամփով: Նա խնդրում է Երեւանին ուղարկել գնացքներ: Սակայն նրանք տեղ չէին հասնում գաղթականներին փոխադրելու համար:

Հարկ եղաւ սպասել 22 օր, բայց այդպէս էլ գնացքներ չեկան եւ ոչ մի մարդու հնարավոր չեղաւ ճամփել: Վարդանյանը ստիպված է լինում դարձյալ անցաթուղթ տալ մոտ 180 զանգեզուրցիների եւ Մեղրի ճամպել Ղարադաղի եւ Մուծումբարի վրայով տուն ուղարկել: Զանգեզուրի նորաստեղծ իշխանութիւնները նրանց ընդունեցին շատ սիրալիր եւ Գ. Վարդանյանին նամակով խնդրեցին ետ ուղարկել նաեւ մնացած զանգեզուրի փախստականների: Նրանից հետո զանգեզուրցիների հաջորդ խումբը եւս բաղկացած 63 հոգուց, նույն ճանապարհով ուղարկեց տուն:

Վերջապէս Ա. Մուսվանը մի պաշտոնական գրութեամբ Գ. Վարդանյանին հայտնում է, որ Երեւանը հնարավորութիւն չունի գաղթականների համար առանձին գնացք ուղարկել, ուստի պետք է աշխատել մաս-մաս նրանց ճամփել Զուլֆա, իսկ այնտեղից Երեւան բերել զանազան գնացքներով:

Այս հրահանգից հետո պարսկական երկաթուղային վարչութեան հետ համաձայնութեան գալուց հետո (ամեն մի

գաղթականի համար 25 դռանի փոխարեն վճարել 10), օգոստոսի 12-ից վերսկսվեց վերադարձի հոսանքը, որն անարգել շարունակվեց մինչեւ 1921-թ. սեպտեմբերի վերջը: Յուրա-քանչուր գնացքով հայրենիք էր վերադառնում 200-ից 400 մարդ: Գնացքները Թավրիզից Զուլֆա էին գնում շաբաթական 2-3 անգամ:

Օգոստոս ամսվա ընթացքում Գ. Վարդանյանի ստորագրությամբ կրող անցագրերով Թավրիզից Հայաստան գնաց 2,400 հոգի, հուլիս- օգոստոս ամիսներին կազմելով 5,500 մարդ: Այդ ընթացքում էր, որ Հայաստան վերադարձավ նաեւ մտավորականների մի մեծ խումբ: Նրանց մէջ կային ոչ քիչ թվով բարձրորակ մասնագետներ: Ակադ. Ալ. Թամանյանին վերադարձնելու համար Ալ. Մյասնիկյանի համաձայնությամբ Թավրիզ գնաց Սարգիս Լուկաշինը (Սրապիոնյան) եւ հատուկ գնացքով Երեւան փոխադրեց մեծ ճարտարապետին:

Գ. Վարդանյանի գլխավորած ՀԽՍՀ գաղթականական գործերի լիազոր ներկայացուցչությունը օգոստոսի վերջին դադարեց իր գործունեությունը եւ գործը սկսեց իրականացնել Ատրպատականում ՌԽՍՀ գլխավոր հյուպատոսությունը: 1921 թ. սեպտեմբերի 2-ից մինչեւ հոկտեմբերի 1-ը նրա միջոցով Հայաստան ուղարկվեց հետեւյալ թվով փախստականներ. հայեր՝ դիմում է ներկայացրել 2052 մարդ (1136 ընտանիք) որոնցից ստացել են անցագրեր 1927 մարդ (1037 ընտանիք), նախիջեւանի երկրամաս 36 հայ (11 ընտանիք):

Միայն քաղաքացիական ընդհարումների հետեւանքով գաղթած տարագիրներից Թավրիզում դեռ մնում էր մոտ 1,200 մարդ: 1921թ. հոկտեմբերի վերջին այդ ցուցակի մեջ ընդգրկված էր Խորհրդային իշխանության համար անընդունելի 668 հոգի, որը հեկտեմբեր ամսին այդ ցուցակը էլ ավելի կրճատվեց՝ թողնելով 460 հոգու: Նրանցից 200-300 հոգուն վիճակված էր էլ ավելի հեռանալ հայրենիքի սահմանակից երկրից, որոնց մի մասը բնակություն հաստատեց Պարսկաստանի մյուս քաղաքներում, արեւմտյան զինվորները հիմնականում բռնեցին Բաղդադի ճանապարհը՝ Միջագետքում փնտրելու կորցրած հարազատներին,

մյուսները հետագա ամիսներին ցրվեցին Պարսկաստանից դուրս՝
զանազան կողմեր:

1921 թ. օգոստոսի 13-ին ՀԽՍՀ արգործողի մ. Մուսվանը
հետևյալ հեռագիրն էր հղել Թեհրան՝ Իրանի
արտգործնախարարին (պատճենը՝ ՌԽՍՖՅՀ եւ ՀԽՍՀ լիազոր
ներկայցուցիչ Ռոտշտեյնին)։

«Մեր ունեցած հավաստի տեղեկություններով ժողովրդա-կան
վրեժխնդրությունից փախած Հայաստանի տապալված
կառավարության նախկին անդամները եւ այսպես կոչված
փրկության կոմիտեի անդամները, ինչպես նաեւ զանգեզուրի
ապստամբների առաջնորդները ներկայումս ապաստան են գտել
Պարսկաստանում, մասնավորապես՝ Թավրիզում։ Դարձնելով
Թավրիզն իրենց կենտրոն, այդ պարոնները ոչ մի միջոցից չեն
խորշում շարունակելու համար հայ ժողովրդի օրինական
բանվորագյուղացիական կառավարության դեմ հանցավոր
պայքարը, դրանով իսկ խոչնդոտելով մեր հանրապետությունում
խաղաղության եւ կարգի հաստատմանը։ Հայաստանի
կառավարիչների ընդհատակյա գործունեությունը
Պարսկաստանում սկսվել էր դեռեւս ապրիլին, որտեղից նրանք
ղեկավարում էին ապստամբական շարժումը Զանգեզուրում»։

Այնուհետեւ հեռագրում ասված էր.

«Մեզ խիստ զարմացնում է, որ մինչեւ այժմ պարսկական
իշխանությունների կողմից ոչ մի միջոց չի ձեռնարկել պայքարելու
այդ երեւոյթի դեմ, որը սպառնում է ոչ միայն Խորհրդային
Հայաստանի, այլեւ Պարսկաստանի անդորրութունը։ Հանուն
Խորհրդային Հայաստանի եւ Պարսկաստանի մինչեւ հաստատված
բարիդրացիական հարաբերությունների, իմ կառավարությունը
դիմում է Ձեզ՝ վճռական միջոցներ ձեռք առնելու Հայաստանի
նախկին իշխանությունների եղկելի աշխատանքը դադարեցնելու
եւ նրանց Պարսկաստանի սահմաններից վճռելու համար։

Ընդունեցեք Ձեր նկատմամբ հարգանքի հավաստիացումներս»²¹ :

Իր հերթին ՌԽՍՖՆ արտաքին գործոց կոմիսար Գ. Վ. Զիչերինը, անշուշտ Հայաստանի կառավարության խնդրանքով, 1921 թ. սեպտեմբերի 30-ին նոտա է հղում (N11/5163) Պրսկաստանի արտաքին գործոց նախարար Մուշարուկ Ազամին, անհանգստություն հայտնելով, որ պարսկական իշխանությունները շարունակում են հանդուրժել իրենց տարածքում հայկական հակախորհրդային զինված խմբերի ներկայությունը, որոնք վտանգ են ներկայացնում Խորհրդային Հայաստանի անվտանգությունը: Մասնավերապես շեշտված էր, որ Ամիր Արշադը եւ նրա եղբայր Սարգար Արշադը սերտ հարաբերությունների մեջ են Վրացյանի հետ, մի բան, որ Մոսկվայում տեղիք է տալիս լուրջ խորհրդածությունների:

ՌԽՍՖՆ-ում պարսկական դեսպան Մուշավեր ու Մամալիքը հոկտեմբերի սկզբին Զիչերինին է հանձնում իր երկրի արտգործնախարարի պատասխանը, որտեղ ասված է, որ «Ամիր Արշադի եւ Վրացյանի կոմիտեի փոխհարաբերությունների վերաբերյալ Ռուսաստանի արտգործնախարարությունը կտրվի հանգամանալից պատասխան, իսկ ինչ վերաբերում է Պարսկաստանում ապաստանած հազարավոր հայերին, ապա նրանք հասել են այնտեղ «կատարելապես անզեն եւ ուզում են միայն կյանքի ապահովություն՝ վերադառնալու համար իրենց տեղերը»²² :

Գալով զինված հայ միավորների հարցին, Մուշար ու Ազամին գրում էր. « Պարտքս եմ համարում Ձեզ հայտնել, որ վերոհիշյալ միավորները, եթե այդպիսիք գոյություն ունեն, պիտի կազմված լինեն պարսկահպատակ հայերից, որոնք համաձայն մեր երկրի սահմանադրական օրենքների, ունեն հավասար իրավունքները եւ

²¹ - Արամ Սիմոնյան, «Պարսկաստան անցած հայ փախստականների վիճակը 1921թ. հուլիս-նոյոմբերին, Իրան Նամե Երեւան, 1998, համար 1-2-3 (29-30-31) էջ 67:

²² - Նույն տեղում:

այդ հիմունքներով ծառայում են կազակների, ժանդարմերիայի եւ այլ զորամասերի մեջ, որոնց մասին տեղյակ է պարսկական կառավարությունը»²³։

Հետագա ամիսներին նույնպես Երեւանի կառավարութիւնը շարունակում էր ակնդետ հետեւել Թավրիզի դաշնակցականների գործունեութեանը եւ հետապնդում էր նախկին նպատակը՝ որքան հնարավոր է նրանց շուտ հեռացնել Խորհրդային Հայաստանի սահմանակից երկրից։

1921 թ. դեկտեմբերի 11-ին Թավրիզում Խ. Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Լեւոն Սարգսյանը նամակ է ուղարկում Թեհրան, Պարսկաստանի արտաքին գործերի նախարար Մուշար ու Ազամին՝ բողոքել այդ երկրում դաշնակների շարունակվող հակախորհրդային գործունեության դեմ։ «Մասնավորապես,՝ գրում է նա,՝ օգտվելով Ատրպատականի ներկա խառնակութունից, նոքա իրենց հայտարարել են որպես Հայաստանի պաշտոնական մարմին եւ նույնիսկ այժմս, երբ պարսից պետութիւնը Իսմայիլ աղա Սմկոյի ըմբոստութեան դեմ պատրաստութիւնների գործով է զբաղված, վերոհիշյալ ղեկավարները եռանդ ու ջանք են գործադրում եւ Հայաստանի զինվորական ծառայողների հրամանատարութեան տակ Թավրիզ փախած զորքից, ինչպես եւ պարսկահայատակ հայերից խմբեր են կազմակերպում, որպեսզի հարմար առիթին հարձակում գործեն Հայաստանի վրա։ Ես համոզված եմ, որ մինչեւ այդ գաղտնի կառավարութեան բոլոր անդամները եւ գործիչները Թավրիզից դուրս չքշվեն եւ չարտաքսվեն, մեր երկու բարեկամ եւ հարեւան պետութիւնների բնակչության կացութիւնը հավասարապես վտանգված կլինի։ Հուսով եմ որ Զեռդ գերագանցութիւնը այս մտերմական հիշատակա-գրութեան մասին կտեղեկացնի նաեւ Ատրպատականի նահանգապետութեանը եւ կպահանջի նրանից, որ նա վերոհիշյալների խռովահոլով գործողութիւնների սանձահարման համար համապատասխան կարգադրութիւն անի»²⁴։

²³ - Նույն տեղում։

²⁴ - Նույն տեղում։

Ի պատասխան այս նամակին, Պարսկաստանի արտգործնախարարը գրում է, որ Թավրիզում մնացել է ընդամենը 1200 կովկասահայ փախստական եւ Հայաստանի նախկին պետության ղեկավարներից վեց հոգի: Դրանց կեսը պատրաստ է, ապահովություն ստանալուց հետո, վերադառնալու իր ծննդավայրը, մյուս կեսը տրամադրություն չունենալով վերադառնալ Հայաստան, պատրաստ է Թավրիզից հեռանալ Պարսկաստանի խորքերը, այնտեղ, ուր հարմար կգտնի պարսից կառավարությունը: Նախարարը ավելորդ չէր համարում շեշտելու, որ Թավրիզում մնացած կովկասահայերը «ամբողջապես գտնվում են ճնշված տրամադրության մեջ եւ վարում են չքավոր, չարքաշ կյանք», որ նրանք երբեկից խռովություն ստեղծելու նպատակ չեն ունեցել եւ չունեն»: Ինչ վերաբերում էր Խորհրդային Հայաստանի լիազոր ներկա-յացուցչի այն պնդումներին, թե դաշնակները կազմակերպում են զինված խմբերի, դրան ի պատասխան պարսիկ նախարարը գրում էր. «Այդ լուրը անհիմն է, նոքա բոլորն էլ զինաթափ են եղել Ղարաբաղում եւ ոչ մեկը նրանցից զենք չունի: Հայոց պետության վախը նրանցից ոչնչով չի պատճառաբանվում եւ ոչ մի կազմակերպումն ընդդեմ պետության տեղի չի ունեցել: Երբ Իսմայիլ աղա Սմկոյի դեմ պատերազմական պատրաստություններ էին տեսնվում, պարսկահայատակ սալմաստեցի եւ Ուրմիայի հայերի մի որոշ մասը զինվեց եւ ընդունվեց պատերազմական ծառայության մեջ: Միայն երկու հոգի Զանգեզուրի հայերից, որ պարզվեց հետո, մտել էին պարսից զորքի մեջ եւ նրանց մասին էլ Ատրպատականի նահանգապետության կողմից հրաման եղավ զորքից դուրս հանելու: Հիշատակելով վերոգրյալը, ես հուսով եմ, որ դեպի հայ փախստականները մեր կառավարության կողմից ցույց տված կարեկցությունը չի կարող, հակառակ սպասողության, ծագում տալ անցանկալի երեւոյթների»²⁵:

Թեեւ պարսկական իշխանություններն ընդհանուր առմամբ հանդուրժողաբար եւ ըմբռնումով էին վերաբերվում փախստական

²⁵ - Նույն տեղում էջ 68:

ղեկավար գործիչներին ու մտավորականներին, բայց Մոսկվայից եւ Երեւանից եկած նոտաների ազդեցության տակ սկսել էին անհանգստանալ եւ եկվորներին հասկացնել տալ, որ իրենց երկրում այլեւս անցանկալի է նրանց ներկայությունը: Հատկապես մի քանի անգամ նախազգուշացումներ արեց Ատրպատականի նահանգապետ Մուխտար Սալտանեն:

Իրենց հերթին անհանգիստ էին նաեւ տնտեսական-կենցաղային տառապանքներ կրող գործիչներն ու մտավորականները: Նրանք ոչ առանց հիմքի վախ էին զգում, որ մի օր իրենք կհայտնվեն սահմանից այն կողմ՝ Երեւանի բանտում:

Թավրիզի գաղթականության մասին Ալ. Մյասնիկյանին ներկայացրած զեկուցագրի մեջ հայկական բանակի հետախուզությունը դեռեւս օգոստոսի 11-ին գրել էր, որ Փրկության կոմիտեի եւ Սյունիքի կառավարության ղեկավարները վախ ունեն թե խորհրդային Հայաստանի կառավարությունը կարող է պարսկական կառավարությանից պահանջել իրենց հանձնել նրանց, պատճառաբանելով, որ զանգեզուրյան կռիվների ժամանակ պարսկական կողմի գիտությանը Լեռնահայաստանի կառավարության անդամները եւ Փրկության կոմիտեի վարչապետը գտնվել են Թավրիզում եւ այնտեղից ամբողջ ժամանակ հանձնարարականներ են ուղարկել Զանգեզուր՝ դրանով իսկ խախտելով Պարսկաստանի չեզոքությունը:

Այդ երկուլից դրդված եւ Երեւանի մտադրությունների մասին ստույգ տեղեկություններ ստանալու նպատակով Թավրիզում ստեղծվել էր հակահետախուզություն, որի ղեկավարն էր դաշնակցական Դարասամխոն (դերասան Մխոն):

Միաժամանակ դաշնակների ղեկավարությունը հանդես եկավ հատուկ հայտարարությամբ այն մասին, որ եթե գործիչներին ու մտավորականներին Հայաստան տանելու քայլեր, կամ եթե խորհրդային գործակալների կողմից ահաբեկման փորձեր արվեն, ապա դաշնակցության հատուկ ծառայությունները ինչպես Պարսկաստանում խորհրդային Հայաստանի ներկայացուցիչների, այնպես էլ բուն Հայաստանում՝ խորհրդային կուսակցական եւ

պետական ղեկավար գործիչների նկատմամբ կդիմեն մասսայական ահաբեկչական ակտերի:

Որպես այդ ամենի հետեւանք, գնալով արագացավ գործիչների եւ մտավորականների հոսքը Թավրիզից դեպի հեռուներ: Մեկնում էին առավել վտանգված քաղաքական գործիչները, ապա՝ մյուս մտավորականները:

Ամենից առաջ, դեռ 1921 թ. հուլիս-օգոստոս ամիսներին, Պարսկաստանից դուրս եկան Համո Օհանջանյանը, Շանթը եւ Բախշի Իշխանյանը: Նոյեմբերի սկզբին Թեհրանից Եվրոպա մեկնեց Վրացյանը: Նոյեմբերի 22-ին Նժդեհը Թավրիզից անցավ Թեհրան եւ քանի օր այնտեղ մնալուց հետո մեկնեց Բուլղարիա, նրա հետ էին խմբապետ Քաչալ Կարոն եւ ուսանող Հայկը:

Մի քանի տասնյակ «վտանգվածներ», այնուամենայնիվ, որոշեցին մնալ Պարսկաստանում: Իշխանութիւնների թուլւտութեամբ Թեւան Ստեփանյանը մի քանի զինակիցների հետ նոյեմբերին Թավրիզից մեկնեց Ղարադաղ եւ մշտական բնակութիւն հաստատեց այնտեղ: Նույն կերպ վարվեց նաեւ Յապոնը (Հովհաննէս Պարոնյան), որը հաստատվեց Մուժուժբար հայկական գյուղում:

Թավրիզում մնացին մտավորականների ու գործիչների մի փոքր խումբ եւ մի քանի հարյուր շարքային տարագիրներ: Հիմնավորվելով այստեղ, նրանք պատահական նպատակներով մի կերպ քարշ էին տալիս իրենց գոյութիւնը, մինչեւ որ տարիների ընթացքում համառ աշխատանքով հաղթահարեցին տնտեսական եւ այլ կարգի դժվարութիւններ: Քաղաքում սկսվեց գործել հայկական գիմնազիա, լույս էին տեսնում թերթեր, կազմակերպվեցին դասընթացներ, հիմնվեցին արհեստանոցներ, բացվեցին խանութներ: Այդ ամենի շնորհիվ կենդանութիւն առավ գավառական կյանքը:

Պարսկաստանի խուլ գավառներ անցած գաղթականները եւս աստիճանաբար թոթափեցին բարդութիւնները, լծվեցին զանազան աշխատանքների եւ իրենց քրտինքով ստեղծեցին տանելի պայմաններ:

Հ. Յ. Դաշնակցության Գերագույն մարմինը, որը 1921թ. փետրվարյան ապստամբությունից հետո փոխարինել էր Հ.Յ. Դ Բյուրոյին, իր ժամանակավոր նստավայրից՝ Բոլսարեստից (Ռումինիա) Թավրիզում գտնվող Հայաստանի Հանրապետության կառավարությանը խորհուրդ տվեց ինքնալուծարվել: Կառավարությունը շարունակեց իր գոյությունը մինչև 1921 թ. հոկտեմբերի 11-ը:

Այդ օրը բազմամարդ դահլիճը լուծարքի ենթարկվեց՝ նախապես վարչապետ Սիմոն Վրացյանին լիազորելով կազմել 3-5 հոգուց բաղկացած դահլիճ գլխավորապես տարագրության գործերին հսկելու համար: Նույն օրը Ս. Վրացյանը կազմում է 3 հոգուց բաղկացած «դահլիճ»՝ Ս. Վրացյան, Հ. Տեր-Հակոբյան, Վ. Մինախորյան կազմով, որը հաջորդ օրը, հոկտեմբերի 12-ին անցնում է գործի: Երկու օր հետո, հոկտեմբերի 14-ին, Սիմոն Վրացյանը մեկնում է արտասահման եւ «դահլիճում» մնում են երկու հոգի, որոնք իրենց պաշտոնը շարունակում են մինչև 1923 թ. սեպտեմբերի 24-ը, այսինքն մինչև կառավարության վերջնական լուծարումը²⁶:

²⁶ - Նույն տեղում, էջ 68: Օգտագործվել են Հայաստանի Պետական Կենտրոնական Արխիվի փաստաթղթերը:

TURKEY AND THE ARMENIAN ATROCITIES A REIGN OF TERROR.

**FROM TARTAR HUTS TO CONSTANTINOPLE PALACES.
CENTURIES OF OPPRESSION — MOSLEM AND CHRISTIAN —
SULTAN AND PATRIARCH — BROKEN PLEDGES FOLLOWED
BY MASSACRE AND OUTRAGE.
THE RED CROSS TO THE RESCUE.**

BY THE
REV. EDWIN MUNSELL BLISS,
Late of Constantinople,
Editor of *ENCYCLOPEDIA OF MISSIONS*; Assistant Editor
of *THE INDEPENDENT*,
ASSISTED BY

The REV. CYRUS HAMLIN, D. D., Founder of Robert
College; PROF. E. A. GROSVENOR, of Amherst College;
REV. BENJAMIN LABAREH, D. D., late of Persia, and Other
Eminent Oriental Scholars; also Several Eye-Witnesses of
the Massacres.

CHAPTER XXIV.

AINTAB, MARASH AND URFA.

**The Situation in Northern Syria — No Revolutionary Movement
— Massacre at Aintab — . Kurdish Women — A Turkish
Captain Helps the Pillage — A Colonel Checks it — Caring for
the Wounded — Two Attacks at Marash — Destruction of
American Houses — Brave Men in Zeitun — Story of
Massacres at Urfa.**

SOUTH of the Taurus Mountains, in what is called Northern Syria, are a number of large cities, the most important being Aleppo, Antioch, Aintab, Birejik and Urfa. On the very edge of the mountains is the city of Marash, while in the midst of the range are Zeitun, Albistan, Behesni, Adiaman and some other places of more or less note. Aleppo is a distinctively Moslem city, and, more noticeable still, purely Arabic. Its inhabitants are only to a limited degree Turks, the great majority, whether Moslem or Christian, being of Syrian race. Antioch has less of the Arab element, but all the rest are distinctively Turkish and Armenian. The Turks are very largely of Turcoman rather than Ottoman or Seljuk descent. The Armenians not only lose almost entirely their own language, adopting the Turkish, but differ in some

respects from the Armenians of Asia Minor. Whether this is because they are somewhat shut off by the mountains, or because they were more bitterly oppressed, or because they more thoroughly accepted the inevitable, it is impossible to say. In any case they have been noted for their general sturdiness of character, their general prosperity, and a large degree of liberality for new ideas. Protestant missions have advanced greatly among them, and their system of schools established in the cities is probably the best in the empire. In general, they have always been peaceable, though in the mountains they have not been slow to assert their independence. Few Turks cared to enter Zeitun against the will of its people, and in Aintab their representatives in the local city council were always found self-assertive, though always diplomatic and not aggressive in their manner. As a natural result of their interest in education, it came about that a college for young men was established in Aintab, and one for young women in Marash, and the students in both cities showed marked ability and progressive ideas. For the most part their relations with the Moslems were friendly, though in Marash, where apparently the close proximity of the mountain sections seemed to roughen all, there was considerable jealousy and antagonism.

The Armenian Revolutionists apparently made little effort, certainly met with no success, to embroil these communities, and when the storm burst in the north there was a general feeling that these places would be spared. One exception might be made in regard to Marash, and the well-known jealousy of the Turkish Government in regard to colleges made some fear for Aintab. The mutterings preceding the storm were heard, however, as soon as the word of the massacre at Constantinople had reached the Turkish population of the region. There was trouble in the smaller places first, an attack in Urfa on November 3d; and then, less than



Image © ArmenianHouse.org

[caption] SCENE OF SLAUGHTER. Showing how the unarmed Armenians were clubbed and shot to death by the fanatical and bloodthirsty Moslems.



Image © ArmenianHouse.org

[caption] IMPRISONING ARMENIANS. This is from a sketch by an eye-witness of the brutal seizure of Armenians, and either murdering them or forcing them into the Prison or Death-house at Stamboul.
[page 451] COLLEGE AT AINTAB.

two weeks later, the blow fell at Aintab. The following description by an eye-witness will give the story better than any one else can. The letter is written from the college, which is situated on a hill quite a distance from the city.

“AINTAB, Monday, November 18th, 1895.

“ We have been congratulating ourselves that our city had escaped the outbreak of Moslem fanaticism which has lately swept the neighboring cities with the besom of destruction. But Saturday morning, without the slightest warning, while we were at breakfast, a great noise of shouting and firing of guns came to us from the city, telling us that the work of blood and plunder had begun here, also. My first thought was for the ladies and girls at the seminary and hospital. So, seizing my revolver, I sprang upon my horse and hurried over there. I met and passed many armed Kurds, who live in the suburb just about the hospital and seminary, but they did not interfere with me. Upon nearing the city, the confused sound that had reached us at the college became resolved into its elements; and I could distinguish the hoarse cries of fighting men, the screams of women and children, and, most terrible of all, the shrill, exultant *lu-lu-lu-lu* of the Kurdish and Turkish women, cheering on their men to the attack. I found the girls’ school and hospital had not, as yet, been attacked. Dr. Hamilton and Miss Trowbridge preferred to remain at their post of duty rather than to join the ladies at the seminary, which decision I could not oppose. Upon my return to the seminary, which is separated from the hospital yard by a narrow street only, I found Brother Sanders there, and shortly Our nearest neighbor, Hadji Hussein Agha, came in and said that at the outbreak which occurred at the Bazar, he had hastened at the top of his speed — not great at best, for he is a very fat man — to protect the hospital and girls’ school. As I had saved his brother’s life by a desperate surgical operation some years ago, and always been on friendly terms with him, I felt we could trust him to do his best. But when, a few minutes later, some 200 soldiers in uniform, with fixed bayonets, filed out of the street below; and marched into the open just beyond the seminary, I felt a great relief; for that meant that the government intended to protect the Americans at least. From the upper veranda of the seminary we could plainly see the crowd of plunderers breaking into Christian houses and carrying off house hold goods. We could see the brave defense made by some of the Christians from the housetops with stones and firearms, where they had them, and still the horrid *lu-lu-lu* of the Kurdish women rent the air, mingled with the screams of the conquered, wounded and the dying, the hoarse cries of the men and the frequent reports of the firearms. An attack was made

upon the hospital gate, but Hadji Hussein held the assailants in check until the soldiers arrived and drove them off. Clouds of smoke from a fire in the lower part of the city added to the terror of the women servants at the hospital, some of whom lived in that neighborhood. But the girls at the school behaved very well indeed. About noon, seeing that there was no immediate danger of an attack upon the seminary or hospital, I left Brother Sanders there and returned to the college. Here I found some thirty or forty refugees, mostly stonecutters, who had been out on the hills at work, and a few women and children.

“ Not long after noon the disturbance in the part of the city near us had mostly ceased, although the occasional sound of guns and the smoke of burning houses from the central part of the city showed that the fiendish work still went on; and a continual passing of villagers with bundles of plunder on their backs, and some with donkey loads and camel loads, showed too plainly that the looted area must have been considerable. Although not anticipating a night attack, we thought it wise to make preparations for one, and so barricaded the most defensible of the buildings on the campus for a rendezvous, set a watch and retired. But there was not much sleep. Nothing occurred during the night, and a cloudy morning broke above the city. At sunrise the villagers had already begun to enter the city; but soon after that the soldiers began to stop them, in a half-hearted sort of way, allowing them to congregate in large numbers a short distance away from the line of soldiers. About eleven o'clock I saw through my field-glass a captain on a white horse (I recognized both the man and the horse) approach a crowd of the plunderers, about two hundred strong, who had been driven away from the city, upon the hill, a quarter of a mile or so to the south, and make a harangue to them. Then he turned back toward the city with the soldiers who had been holding back the mob; and before they had reached the city the whole crowd had swarmed past them and entered the streets; then I knew the scenes of the day before were to be repeated, so taking my field-glass I mounted to the college tower as offering a better view, I did not have long to wait before the head of the crowd appeared, coming up through Pasha Street, which had been completely looted the day before. They poured out of the street, a motley crowd of Turkish villagers, city Kurds, and roughs to the number of fifteen hundred or so, and turning to the right made a rush for the Christian quarter of Haik. That quarter has a strong gate across its entrance, and thirty or forty Christians were gathered upon the housetops, commanding the approach to this gate, armed with stones and two or three guns; and with the advantage afforded by their position on the flat roofs they held the mob at bay for three-fourths of

